ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 33 - Ա
06 սեպտեմբերի 2013 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ «ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԵՎ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲԻ ՊԵՏ» ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի,Հայաստանի ՀանրապետությանՆախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարի 2012 թվականի մարտի 20-ի թիվ194-Ն , ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 2012 թվականի մարտի 26-ի թիվ 32-Ն, ՀՀ Պաշտպանության նախարարի 2012 թվականի ապրիլի 11-ի թիվ 323, ՀՀ ոստիկանության պետի 2012 թվականի մարտի 24-ի թիվ 5-Ն, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2012 թվականի մարտի 21-ի թիվ 1-Ն, ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենի 2012թվականի ապրիլի 4-ի թիվ 1-Ն համատեղ հրամանով հաստատված «Տարվա լավագույն զինվորական ղեկավար և լավագույն քաղաքացիական պաշտպանության շտաբի պետ» մրցույթի անցկացման կարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետը

կարգադրում եմ՝

1. ՀՀ Գեղարքունիքի մարզում «Տարվա լավագույն զինվորական ղեկավար և լավագույն քաղաքացիական պաշտպանության շտաբի պետ» մրցույթը կազմակերպելու և անցկացնելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Սաֆարյան Հ. – ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի վարիչ (նախագահ)

Բազիկյան Տ. – ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջատար մասնագետ

Աբրահամյան Հ. - ՀՀ Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի պետ

Ափրեյան Խ. - Գավառի զինկոմիսարիատի հաշվառման և կցագրման գծով տեսուչ

Սարգսյան Ռ. - ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության ծառայության խմբի պրոֆիլակտիկայի ավագ տեսուչ, ոստիկանության մայոր

Կոստանյան Ա. - ՀՀ ԱԱԾ Գեղարքունիքի ՄՎ ավագ օպերլիազոր

2. Հանձնաժողովին (նախագահ Հ. Սաֆարյան)՝
սահմանված կարգի համաձայն կազմակերպել և անցկացնել «Տարվա լավագույն զինվորական ղեկավար և լավագույն քաղաքացիական պաշտպանության շտաբի պետ» մրցույթը և ներկայացնել տեղեկատվություն:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ